

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011943592, 2012036017 և 2012009575 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 26 >> 01 2021թ. 7-13- 705

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Հայկազ Սարգսյանի ՄԴ/4229-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 7-րդ զանգվածի 15-րդ շենքի 24-րդ բնակարանի բնակիչ Հայկազ Սարգսյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011943592, 2012036017 և 2012009575 որոշումները՝ նշելով, որ իրավախախտումները կատարել է ճանապարհին առկա խոչընդոտի հետևանքով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011943592, 2012036017 և 2012009575 որոշումներն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է հետիոտնային անցումների վրա** և շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5 մ մոտ վայրում:

Անհրաժեշտ է նշել, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով կատարված իրավախախտմամբ նախատեսված չէ նվազ նշանակություն ունենալու որևէ պայման (կանգառի տևողություն, ուղևոր նստեցնելու կամ իջեցնելու նպատակով կանգառ կատարել, դիտավորություն, անզգուշություն և այլն), բացի այդ՝ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին որոշումների հիմքում դրված

տեսանյութերից ակնհայտ է, որ ճանապարհին առկա խոչընդոտը ստեղծվում է հենց վարորդի կողմից:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011943592, 2012036017 և 2012009575 որոշումների հիմքում դրված տեսանյութերի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը համապատասխանաբար 12.11.2020թ. ժամը 16:39-ին, 30.11.2020թ. ժամը 16:09-ին և 25.11.2020թ. ժամը 15:25-ին Երևան քաղաքի Ագաթանգեղոս - Խորենացի փողոցների խաչմերուկի հատվածում տեղակայված է անմիջապես հետիոտնային անցումների վրա:

Այսպիսով, դիմումատուի արարքներում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներն իրավաչափ են և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011943592, 2012036017 և 2012009575 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայկազ Սարգսյանին:



**Ե. Կարապետյան**